ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ և
ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային ապահովության և այլ դրամական վճարների վարչության փորձագետ Ռոզա Մկրտչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ

1.Հաշվետու ժամանակահատվածում մշակել (լրամշակել) եմ հետևյալ իրավական ակտերի նախագծերը (հաշվի առնելով շահագրգիռ նախարարությունների կարծիքները).

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (ընդունվել է 2022 թվականի դեկտեմբերի 15-ին թիվ 1986 - Ն որոշմամբ).

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքները ամփոփվել և ուղարկվել է Կառավարություն).

3) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ (ուղարկվելու է Արդարադատության նախարարություն).

2. Կարծիքներ եմ տվել կենսաթոշակային ապահովության վարչության քննարկմանը ներկայացված՝ կենսաթոշակային ապահովության բնագավառին և նպաստներին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի հետևյալ նախագծերի վերաբերյալ.

1) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կուտակային

կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», Հայաստանի Հարապետության օրենքների նախագծեր.

2) Ազգային անվտանգության ծառայությունից ստացված «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «զենքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր.

3) Արդարադատության նախարարությունից ստացված «Դատախազության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ.

4) ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունը՝ ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանությունների յուրաքանչյուր կետի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու մասին.

3. Մասնագիտական եզրակացություններ եմ պատրաստել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից ստացված՝ կենսաթոշակային ապահովության բնագավառին, ինչպես նաև պարգևավճարին և նպաստներին վերաբերող օրենսդրության առնչությամբ ստացված գրությունների և հարցումների վերաբերյալ (9 գրություն):

4. Քննարկել և վերլուծել եմ կենսաթոշակային ապահովության բնագավառին, ինչպես նաև պարգևավճարին և նպաստներին վերաբերող օրենսդրության

առնչությամբ քաղաքացիներից ստացված դիմումները և դրանց սահմանված կարգով տվել եմ համապատասխան ընթացք (15 դիմում):

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՌՈԶԱ ՄԿՐՏՉՅԱՆ

21.12.2022